ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Մասիս համայնքում գործում է թվով 6 բուժամբուլատորիա (Խաչփար, Նորաբաց, Այնթապ, Սիս, Ռանչպար, Արբաթ գյուղերում): Առողջապահական ոլորտի խնդիրները բազմազան են՝ սկսած համապատասխան կադրային մասնագետների պահանջմունքից, հետազոտական, լաբարատոր սարքավորումներից մինչև բնակչության արդյունավետ և որակյալ սպասարկում: Առողջապահական ոլորտի փորձագետ-օպերատորի առկայությունը հնարավորություն կտա ծանոթանալ ոլորտի կտա ծանոթանալ ոլորտի առանձնահատկություններին, խորանալ խնդիրների մեջ, վեր հանել դրանք, ուսումնասիրել կոնկրետ ոլորտներ, ուղղություններ և ձգտել անհրաժեշտ գիտելիքներով և կենսափորձով ուղորդել, բացատրել և օգնել համապատասխան ՀՈԱԿ-ներին, որպեսզի հարցերն ու խնդիրները ճշգրիտ լուծում ստանան:

Կարևոր է և անհրաժեշտ փորձագետ-օպերատորի կողմից բուժամբուլատորիաներ փորձագիտական այցերի կազմակերպումը, թրեյնինգների կազմակերպումը, մասնագետների լայն շրջանակների հետ շփման հնարավորությունը, ներսից քննարկումներ ունենալ ներքին և արտաքին շահակիցների հետ:

Առողջապահական ոլորտի փորձագետ-օպերատորի հաստիքի առկայությունը կխթանի առողջապահական հաստատությունների աշխատանքների արդյունավետությունը, ծառայությունների որակի բարելավումը, հանրային միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ մոնիթորինգի մեթոդաբանական մշակմամբ, գյուղական ամբուլատորիաների աշխատանքների , կահավորանքի, հագեցվածության, աշխատակազմի, պատվերի, սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ անհրաժեշտ մոնիթորինգների կազմակերպումը: Հետևաբար, վերոնշյալ աշխատանքները հավուր պատշաճի կազմակերպելու նպատակով առաջարկում եմ համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմում ավելացնել ևս մեկ փորձագետ-օպերատորի հաստիք (առողջապահական ոլորտի հարցերով):

Քարտուղարության, անձնակազմի կառավարման,
տեղեկատվական տեխնոլոգիաների
բաժնի պետ՝ Ծովինար Գալստյան